

# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԻՍԻԱՆՈՒՄ

Փետրվարի 27-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Միսիան համայնքում քաղաքացիների ընդունելություն կատարեց:

Ընդունելության եկավ 44 հոգի:

- Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմեց 19 հոգի,
- աշխատանքի տեղավորման՝ 8,
- բնակարանով ապահովելու՝ 3,
- տանիքի եւ բնակարանի վերանորոգման՝ 4,
- հողամասի սահմանների ճշտման՝ 2,
- դպրոցը որդու անվամբ անվանակոչելու, նպաստի վերականգնման, պետպատվերի շրջանակներում բուժում ստանալու, գյուղատնտեսական ծրագրի, մշակութային ծրագրի իրականացման, քարի մշակման արտադրության, մանկապարտեզի վերանորոգման եւ վարկ տրամադրելու խնդրանքով՝ 1-ական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից 13-ին տրվել է դրական լուծում, 6 դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Ընթացք է տրվել պետպատվերի շրջանակներում բուժում ստանալու մասին դիմումին:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման, եւ ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են վերոնշյալ մյուս խնդրանքների առնչվող դիմումները:

27.02.2019թ.